



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԱՐԺԱՆԱՑԵԼ Ե ՄՐՑԱՆԱԿԻՆ
ՀԱՅ (ր) ԱՆ ԿԻՑ ԱԳՐ-ՊՐՈՊ. ԿԵՆՏ. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՔ

ՅԱԼՏԱՑԻ

ԽՈՇՀՐԴԱՎՈՐ

ՏՐՏՈՒԽՎԱՐԵՐ

(Աղբու-զպուլց)

891. 99

ՅԱ - 21

ԼԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ - 1926

6 NOV 2011

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք.

391.99

3-21

11
No 36

36 «ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ» № 36

ՀՈՂՔՈՂԿՈՄԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ
ԼԱԽԱՆ ԵՎ ՏԵՎՈՅ

«ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ»-Ի

ՀԵՏԵՎՈՅԱԼ ԳՐԱԲՈՒԾ

- | | | |
|--|--|-------|
| 1. | Աւղագույց անտառակին աշխատավարի | 50 կ. |
| 2. | Վ. [redacted]. — Մեր անհլիքները (սպասված) 20 » | |
| 3. | Հ. Փիրումյան յեզ Ս. Մելքոնյան. — Ինչու
ձեսնուու յեզ զործարանում յուզ և շվեյց. | 3 * |
| | պանիր պատրաստելը | |
| 4. | Հ. Փիրումյան. — Առոտարդույսները և նրանց
մշակության յեղանակները (սպառ.) | 10 » |
| 5. | Խ. Ս.վալբեգյան. — Հ. Ս. Խ. Հոգային
Որինսպիրը, բացառորական հարց ու պա-
տասխաններով, մանն առաջին, աշխատավո-
րական հոգովագործություն (սպասված) | 40 * |
| 6. | Պ. Հեթիմյան. — Թթենու մշակությունը | 10 * |
| 7. | Պ. Հեթիմյան. — Երամի վորդը, նրա կերա-
կրելն ու խնամքը | 10 * |
| 8. | Խ. Յերիցյան. — Կաթնառանտեսության զործ-
նական ձևնարկ, մասն առաջին (64 նկ.) 1ո. 50 » | |
| 9. | Խ. Սելիբ-Շահնազարյան. — Ծխախոսի մշա-
կությունը | 20 * |
| 10. Ս. Ֆրիզովին. — Տասը պատզամ անտառակին | 20 * | |
| 11. | Խ. Յերիցյան. — Անհատական, թէ կոոզ, կաթ-
նառանտեսություն | 10 * |
| 12. | Հ. Հարուբյուն. — Բատրակ, կոքիր պայմա-
նակիր (չափածո) | 5 * |
| 13. | Մ. Թումանյան. — Շաբքացանքը և նրա նշա-
նակությունը | 15 * |
| 14. | Խ. Տեր-Ենեսիսյան. — Ինչպես մշակել խա-
զովի այլիները (28 նկարով) | 35 կ. |

30.180.31

ԽՈՐՀԻԴԱՎՈՐ

ՏՐՏՈՒՅՁՆԵՐ

(Ազրություն)



ՀՈՒԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ-1926

09.07.2013

45336

ԱՐԺԱՆԱՑԵԼ Ե

ՀԱՅ (Բ) ԿԱՆ ԿԻՑ ԱԴՐՈՊՐՈ-
ՊԱԳԱՆԴԱՑԻ ԿԵՆՏՐՈՆԱ-
ԿԱՆ ՀԱՆՉԵԱԺՈՂՈՎԻ
ՄՐՅԱՆԱԿԻՆ

Գլանեպվար № 822 (Բ)

Տիբաժ 2000

Պետհրատի Յերկրորդ տաղարան, պատվեր. № 155

ԽՈՐԴՐԴԱՎՈՐ ՏՐՏՈՒՆՁՆԵՐ

Չմեռ եր... Շեն գյուղի տներն ու գոմերը ծածկված եյին խոր ձյունով։ Պարզ, աստղազարդ յերկինքն ավելի յեր սաստկացնում գիշերվա ցուբար։ Քամին ներս եր վզզում յերդիկներից և բոլոր ճեղքերից։ Գոմը ցրտել եր։ Կաշի ու վոսկոր դաշտած անասնունները վաղուց վերջացրել ելին վորոճը, մեջք-մեջքի տվել ու տաքացնում ելին իրար։

— Ուֆ, հառաչեց Մարալը և իր հառաչով դարթեցրեց Զեյրանին։

— Ի՞նչ ա, Մարալ, մըսնում ես։

— Բա չեմ մըսում։ Ի՞նչ ա մնացել սարից բերած պմառվա ճարպիցս...— Կաշի ու վոսկոր...

— Գոնե ես անտեր գոմի յերդիկներն ու գոան ծակերը կալնելին, տակներս ցամաքեցնելին, մի քիչ դարման ու փեյին շաղ տալին, վոր տակից ելա չսառչելինք։

— Բա ջմնս ինչքան քոր ա դալիս... Հոկտեմբերի անձրւից հետո կեղտի ու ցեխի մե կորել եմ։ Գլուխս ել ամեն տեղ չի հասնում, վոր լեզվովս մի քիչ մաքրեմ ինձ։ Ազգը երս կեղտի մեջ կորած, ծծերս թրքով կոլողված, վիզս բոստ,

աշքերս ճպոռտ, կճղակներս մաշված. ի՞նչ կյանք
ա սա:

— Յեվ զարմանալին են ա, վոր այս զրու-
թյամբ մեր տերը՝ Գալոն ուղում ա մեղանից
շատ յուղ և կաթ ստանա, մեր հորժերից լավ
կովու լավլծկաններ մեծացնի: Ցուրտն ու կեղար
մի կողմ թողած, ի՞նչ ա մեր կերածը—չոր ու
դեղնած դարման: Իսկի սնունդ կա դրա մեջ,
ամենկին, համ իրան ա խարում, համ մեզ: Են
ել բերում ու են տեսակ բարձր մսուրի մեջ ա
լցնում, վոր մինչեւ ուտում, վերջացնում եմ, մեջքս
կոտրվում ա, կոկորդս սեղմում, խեղդում. Իսկի
չի մտածում, վոր մսուրը շատ—շատ գետնից կես
արշին բարձրություն պետք ա ունենա, վոր մենք
մսուրից ենպես ուտենք, ինչպես հանդումն ենք
արածում: Մսուրն ել պատին կպած, տակն ել
քարից ու ցեխից շինած, դարման ուտելիս հող
ա, վոր բերանդ ա ընկնում ու կուլ ես տալիս:

— Դա ել կասի, վոր տավար եմ պահում:

— Յեվ ի՞նչ, քուզիկ Մարալ, միթե դժվար
ա մի փայտի սանը առնել, մի հատ չոթք, և մեզ
ազատել ես ցեխից ու կեղարից, վոր մի քիչ ջաննե-
րըս դինջանար, գոլ ջրով լվանար և մի քիչ խոզի
յուղ կամ վաղելին քսեր մեր ծծերին, վոր նրանք
կակուղ մնային, չճաքճեցին: Հերու կեղարից
պտուկս ճաքեց, կուրծս ուռավ, կաթս փշացավ,
մի ամիս յես չելի կթվում, համ ինքը վնասվեց,

համ ել ինձ տանջեց: Զի իմասում, վոր եղ ա-
մենը կեղտից ա:

— Զեյրան ջան, բա Եղ ա մենակ: Յերկու-
րերեք որով ամբողջ թրիքը գոմումն ա թողնում,
վոր տաք լինի: Յերդիկները չիմով ծածկում ու
ես անտեր թրիքի հոտով խեղդում ա մեզ: Ու-
րիշները հո սրա նման չեն, ամեն որ գոմը մաք-
րում են, իրենց տավարի դադըր գիտեն, կարծես
հենց մեր որն ա սեացել: Ի՞նչ մեծ բան կլիներ,
յեթե մի քիչ լույս և արև լիներ մեղ համար:
Գոնե արևը ներս կմտներ, լույս կլիներ և յես իմ
հորթուկին կտեսնելի: Պատի մեջ մի յերկու լու-
սամուտ բաց աներ, համ լույս կունենայինք,
համ ել ուզած ժամանակ մաքուր ոդ: Ո՞հ, ի՞նչ
քան կարոտ ենք մնում լույսի և մաքուր ոդի,
5—6 ամիս շարունակ: Բա սա բանի նման ա:

— Ե՞ն, Մարալ, ցավալին են ա, վոր ամեն
բանում մեզ ա մեղագրում, մեզ ա անշնորհք
անվանում: Աշնանը, յերբ վոր Մարոյին ու վոք-
րիկ Մուկուչին տեսնում եյի լալով, ցամաք հաց
ուտելիս, սիրաս մղկառւմ եր, ուզում եյի մսերիցս
պոկել, կաթ շինել: Բայց անտեր մնա, պտի բան
ուտես, վոր ինքդ ել մի բան կարանաս տալ, չե՞:
Են ցրտին ահազին ճանապարհ եյինք գնում,
դունչներս չոր խոզանին ու քարերին քսում ու
տուն դալիս, ահազին գիշերները մնում սոված
ու ծարավ, գոնե մի անդամ փորձեր, իրիկնեց

մի խորոժ խոտ քցեր առաջներս, տեսներ ինչպես
կաթ կտայինք ե...

— Զեյրան ջան, բա յես: Այս, ինչքան եմ
կարոտել մի քիչ քուսպի ու գարու ալյուրով
լափի: Մեր տերը բերում, մեր աչքի առաջ յեղ-
ներին խոտ, քուսպ ու թեփ ա տալիս, իսկ մեզ
միայն դարման: Իսկի չի ուզում մտածել, վոր
մենք ել աչք ունենք, մենք ել հոտ ենք առնում:

— Հո ձրի չենք ուզում. թող փորձի, թող
յերկու շահու ալյուր կամ քուսպ ավելացնի,
տեսնենք յերկու տակ հետ կտանք հենց նույն
որը, թե չե:

— Բա ջուր՞ը. առավոտյան են ցրտին, վոր
դուրս չի անում գոմից ու քշում դեպի գետը,
սաղ ջանս սառում ա: Հետո ել, վոր են սառուց-
ների տակից քթլացող ջրից չեմ խմում՝ ատամ-
ներս, բերանս ու ստամոքսս ցրտահար ե լինում
ու պազում. գե արի ու տաքացի բաց յերդիկա-
վոր գոմում: Իսկ յեթե գոմում մեզ ջուր տա,
կամ ջրհոր փորի, կամ իրիկնենց ջուրը բերի, մի
մեծ դագանի, յա տաշտի մեջ լցնի ու առավոտ-
յան խմացնի, մենակ դրա փոխարեն յես ուզիդ
մի շիշ կաթ կտամ համ հորթուկիս համ տիրոջս: Իսկ
յեթե լավ խոտ տա ու քուսպ, կամ ալրի
թեփ, յես ենքան կաթ կտամ, վոր զարմանքից
բերանը բաց կմնա: Տվածն ել ինչ ա լինելու
վոր: Ամեն մի փութ քաշիս հարկավոր ա տալ մի

փունտ խոտ, իսկ դրանից ավելի ինչքան քուսպ
ու ալյուր տա, ամեն մի ֆնտին յերեք փունտ
կաթ կտամ: Դրանով նա համ իրան տան ծախոր
կիանի, համ իր յերեխաները կուշտ կպահի, համ
ել իմ հորթուկիս:

— ԲԵԵ, կանչեց գոմի անկյունում կապած
փոքրիկ հորթուկը, վորի անունը Սոնա ելին գրել:

— Ի՞նչ ա, Սոնիկս, ի՞նչ ես ուզում:

— Զանս քոր ա գալիս: Ես անտեր հավերի
վոջիները հոգիս հանեցին, իսկ վիզս ել քոսոտ,
ուզում եմ պոկեմ:

— Ի՞նչ անեմ, Սոնիկ ջան, ձեռք ել չունեմ,
վոր մի քիչ վոջիլի դեղ քսեմ, կամ նավթի յուղ,
վոր քոսդ վերջանա:

Այս խոսակցության ժամարակ գոմի ողում
քնած տանտերն ու նրա կինը վազուց զարթնել
ելին և ականջ ելին դնում այս տարորինակ
տրտունջին:

— Այ մարդ, լսում ես՝ ինչ են խոսում
մեր կովերը, հարցըց Գալոյի կինը, ահը սրառում:

— Տագ արա ու ականջ դիր, տեսնենք վիր-
ջըն ինչ ա լինելու, — նախատեց Գալոն կնոջը և
շունչը կտրած, ականջ եր գառել, թե ինչ են
ասում կենդանիները:

— Բա սոված եմ մայրիկ ջան, ջանս կերան,
վիզս քոր ա գալիս, գարմանը չեմ կարողանում
ուտել, ասան մի քիչ յոնջա ու ալյուրի թեփ տան:

— Ու՞մ ասեմ, բայտ ջան, ասողին ել յսող
պիտի լինի, թե՞ չե:

— Զելքան ջան, զիտէս ինչ եմ մտածում:

— Ի՞նչ, Մարակ քույրիկ:

— Են, վոր մերը չի ուզում տեսնել ի-
րեն աչքի առաջ ուրիշների արածը: Են չայիրի
արտն ինչ ամ, ենտեղ, վոր յոնջա կամ յերեք-
նուկ ցանի, ենքան խոտ կունենա, վոր բոլորիս
կուշտ կպահի, և մենք ել իրեն կուշտ կպահենք:

— Են ել վոնց. Ավագենց են չալ կովին, վոր
չեմ տեսնում՝ սիրտս պատովում ա: Յես նրա-
նից յերկու անդամ ավելի կաթնով եմ, բայց ան-
տեր մնա սովածությունը: Յես եստեղ սոված
սատկում եմ, իսկ նա ճարպակալած, հպարտ-
հպարտ ման ա գալիս ու որական 9-10 բաժակ
կաթ ա տալիս:

Կովերի մասլահաթից արգեն զարթնել ելին
բոլոր կենդանիները և հետաքրքիր ականջ ելին
դնում խոսողներին:

— Են, ամառը մի կերպ կազդուրվում ենք,
չաղանում, ձմեռը սովածությունից ու կեղտից
նորից հալ ու մաշ լինում: Ենքան չի հասկանում
մեր տերը, վոր յեթե ձմեռը մենք չլզարենք ու
չնյուծվենք, գարնանն ու ամառը կրկնակի կաթ
կտանք: Են խոտը, վոր միո պիտի դառնար ու մեզ
չաղացներ, ուղղակի կաթ կդառնար: Բայց եղբան
խելք մեր տիրոջն ով ա տվել: Միայն զանգատ-
վում ա, թե՝ կեր չունի:

— Յես եստեղ ինչ եմ շինում, ինչի յեն ինձ
վոաքի տակ գցել ու արորում: Ես իմ տեղն ամ,
ես տանելու բան ամ, — խոսեց բակում փոած տար-
թը:

— Բա յես, ավելի ուժզին բողոքեց ցանի
աշտարակը: Ի՞նչ բան ունեմ, ի՞նչ գործ ունեմ
եստեղ: Ամեն առավոտ թոնրի միջին խը՛ր, լըց-
նում են մի յերա քթոց ու իմ ծխով ինձ ել են
խեղում, իրենց ել: Ախր ինչու յես դաշտում
փոված չպետք ա լինեմ, վոր ես ցանի դեղի չափ
հոր լցնեմ վոսկու նման ցորենով: Յես եստեղի
համար եմ ստեղծված, թոնիրն ամ իմ տեղը:

— Տո, մի տար ինձ դաշտ, փոփր ենտեղ, գու-
թանդ լծիր ու հողի տակն արա ինձ: Բեր մի
լավ ընտրած սերմ, ցանիր շարքացանով, վոր դա-
լին չկիսի, հետո արի ու տես, քո բոյից բարձր
արտ կտամ, տունդ հացով ու հարսառությունով
կլեցնեմ, թե՞ չե: Ախպեր, ասենք ինձ վառում
եք, ուրիշ շնորհք ու խելք չունիք, զոնե մոխի-
րը դաշտ տարեք, վոր նրանով հողը մի քիչ զը-
գաթի գա: Ախր վոչ ինձ եք դաշտ տանում, վոչ
մոխիրս, վոչ ել հողը կարգին հերկում ու մշա-
կում և հետո ուզում եք կուշտ փորով հաց ու-
տել:

— Եգ ասեք ե, եգ ասեք, խնամի թրիք, ցա-
նի աշտարակ, մոխիրի կուտակ: Զեզ եղ տեղ են
տանջում, ինձ ել եստեղ, — խոսեց Գալովի մոտա-

կա հողը: Բերում են են անտեր վլսկին, չութը ջանը ձանկրառում, վախո ու կեղտոս ցորեն են շաղ տալիս, թե բերք տուր, բացրու: Ախր վժնց բուսցնեմ, ինչ բուսցնեմ: Մի մասը խոտ ու պրչուկ, մյուս մասը գյուլուկ ու փշիշուկ, խոտերից կիսի արմատներն ել սաղ, գարունքից տափ ելած, գարունքը գալիս ե թե չե, վրա յեն տալիս, ցորնի ծիլերին խեղդում: Դեհ, ասեք տեսնեմ, թե վմբը բուսցնեմ: Այ խելոք հողատեր, մի առաջ արի, յերեսս փեխով շաղ տնւր, վիսկով մի լավ չանգոիր, հետո գութանով լավ հերկիր, մաքուր ընտրած ցորեն ցանիր, վրալից զլորան զլորիր, թեթև փոցլիր, ավելորդ խոտերը քաղհանիր, տես, թե ինչպիսի արտ եմ բուսցնում, ինչքան ցորեն, գարի ու գարման եմ տալիս ե: Մի եսենց արա ու փորձիր: Համ ել եղ ինչ հիմարություն ա, ամեն տարի ցորեն կամ գարի ցանելը: Եղքան խելք չունի Գալոն, փոր հասկանա, թե ցորնի ու գարու համար ել ուժ չի մնացել ինձանում, հիմա հարկավոր ա, փոր կարտոֆիլ ցանի կամ տակ, կամ գազար, կամ հենց ուղղակի կորնգան, սիրիսիրի կամ մի ուրիշ խոտ՝ հերթով, հետո կարող ա նորից ցորեն և գարի յել ցանել: Թող փորձի մի այդպիսի բան անի, ու տեսնի թե վժնց ա շենանում:

— Այ են ժամանակ րոլ գարման, գարու լափ ու կեր կունենանք հա... Այ են ժամանակ յեղ ու պանրով կլցնենք մեր տիրոջ կարամաները

հա,—վճչացին Մարտին ու Զելյանը: Ա՛խ, ինչ լավ կլիներ մեր վիճակը:

— Բա, ձայնակցեց Սոնիկը, բա ինչքան ուրախ կլինեյի ու արտինդ կտայի յես: Ե՞ն, յեթե ինձ ջահել վախտու լավ կերակրի ու պահի, ենպես լավ կով դառնամ, վոր ամբողջ գավառում ինձ նմանը չճարփի:

— Մենք ել հպարտ վիզներս լուծ կրնելինք, հպարտ դեմ կտայինք մեր ուսերը խուրձերով լիսելին ու հայդե, արտից դեպի կալը, կբերելինք, բարձր կբարդեյինք ու կլծվեյինք կալին: Համ գարման կուտեյինք, համ ել ցորեն ու գարին կլիներ մեզ բաժին: Այ թե քեփ կլիներ հա:

— Գլուխներս ցավում ա, կիսով չափ չորանում ենք,—ձախ տվին բակի մոտի յեքառուի ծառերը:

— Մեկ հարցնող լինի, թե մեզ ինչու յի եսպես թողել մեր տերը: Պառավել, ծերացել ենք, զլուխներս չորացել ու չի ուզում մեզ ջահելացնել: Արի, կարիր մեր բոլոր ճյուղերը, ամեն մեկից յերկու սայլ փայտ գարսիր, զցիր փեշի մեջ ու սաղ ձմեռը վառիր, փոր տունդ ել տաք լինի, մուխն ել րիչ, տավարիդ աղբն ել հողիկ մնա, մենք ել ջահելանանք: Տո, սրանից ել հեշտ ու լավ բան: Ինչքան ել գեղեցիկ ու շվաքով կլինենք, ինչքան ել ծաղկափոշի կտանը մեղուներին:

— Այ մարդ, լսում յես—մեր ուռենիներն ել են լեզու առել, մի տես, վսնց են խոսում ե...

Մրանք ել ուղում են, վոր բոլոր ճղները կտրտենք:

— Լուսմ եմ, լսում, բայց ես քչփչոցով խոսողն մի ա. մի լսիր...

— Բա յես ինչու յեմ եստեղ կիտված, սադ յերկու տարի, արեի, անձրեի, ձյունի ու թիփու տակ մնացած։ Գլուխս ցրտից սպիտակել ա ու մնացել եմ ապուշ, ճգնավորի նման պլզած ես գոմի կտրին։ Ափսոս, հազար ափսոս են որերին, յերբ կանաչ դաշտում, գեղին արտերի մեջ դիտում ելի կտավույտ յերկինքն ու մոտիս ծաղիկները, — խոսեց կտավատի դեզը։

— Աղջի, սա յել մեր կտավատի դեզն ա, տեսնես սա ինչի՞ յե գանգատվում։ Ես անտեր տեղում տուն յա գոմ ել չի շինվում, վոր ծածկի համար ծախեմ, պլծնեմ։

— Բարձրացել ելի, մի արշին բոյ քշել յուղոտ կտավատով լեցուն գնդիկների փունջեր կապել ու կարծում ելի, թե կդան, խնամքով կպոկեն ու կտանեն տուն, սերմերս կփշեն ու ինձ խնամքով կփուեն, կամ մի 12 որ կթրջեն ջրի մեջ, կչորացնեն, թեկուզ հենց թոնրի վրա, քուրսու նուն փայտերի վրա և կեղևս կհանեն, կթակեն և ինձ բազմ կշինեն։ Հիմա յեկան, ավին ինձ գերանդիի ուխը, իրար խառնեցին, բերին կալը, վրա արին կամն ու տավարը և ես որի

հասցրին։ Յեթե ցածլիկ լինելի, բան չելի ասիր, բայց մի արշին բոյ ունեցաղիս եսպես վիճակ. սա ի՞նչ որ ա, ի՞նչ զբություն ա:

— Ասիր ու պրծմար։ Մի նալիր ինձ, յես շատ վոր լինեմ, շատ, հազիվ տասը տարեկան կլինեմ, — սասց բարդին, — բայց տեսնում ես ելի, դարձել եմ յեքա գերան, վորտեղ ել գցես, 100 փութ ծանրություն կշալակեմ, ինձ նմաններին մեծացնելը հս մի մեծ բան չէ։ Այեն մեկիս մի մետր կամ շատ-շատ յերկու արշին տեղ ե հարկավոր, Այ, Գոլո, կտրիր, մի 30—40 ձյուղ շարիր հեցն եղ տանդ մոտի առվի դրադին և թող։ Տես։ թե 10—12 տարում ինչքան գերան, ինչքան տախտակ կունենաս։ Տունդ ել ծածկիր, գուռ ու լուսամուտներն ել շինիր, թախտ, աթոռ, սեղան, մսուր ու հորթանոց, հավաքունդ ել կովերից բաժանիր, վոր հավերը մսուրների մեջ քուջուշ չանեն ու խեղճ հորթերին վոջիլ չքցեն։ Ապա մի խոսացրու իրեն. «խեղճ եմ, չունեմ, հողս չի տալիս, կովս չի տալիս, յերեխեքս տկլոր ու կիսաքաղց, գարու հաց չեմ ճարում, թե կուշտ փորով հաց ուտեմ», — ես ա նրա սսելիքը, մենակ լեզուն ա շարժում, իսկի խելքին զոռ չի տալիս։

— Բա մեր ու որն ի՞նչ եր, — լավեց հենց գոմի ողի կողքի քունջի հողի տակից հորած կարտոֆիլի ձայնը։ Մենք ինչ որեր ենք քաշել ու հիմի յել բաշում ենք։ Առաջ մեղ հազար ու մի

Ճանդիալներ ղվաթից քցեցին, հետո ել շնչներս կարվեց, խեղգվում ելինք առանց ողի: «Քաղհան, փոցի, փոցխեցեք մեզ», շշնջում ելինք մենք, ըաց ուշք դարձնող չկար: Կակուղ հող տվեք վրաներս, լավ լցըեք – մենք կակուղ և խոր հող ենք սիրում: Ծածկեցէք... ո՞վ եր լսողը: Հունիսի են վերջին, թե հուլիսին, լավ չենք հիշում, Գալոն ու յերեխաները եկան, մի քիչ հող ըլոլեցին վրաներս ու գնացին: Յեթե մի քիչ անձրև եր դալիս, հողի յերեսը պնդացնում, շունչերս կարում, հետո յել ճաքճռում, ջաններս եր վասում: Մնացինք մի-մի պոպոքի չափ: Այնինչ մեզնից ամեն ևեկը կարող եր 2—3 դրվանքա դառնալ: Յեթե տնկելուց առաջ մեզ չոկեր, հիվանդն ու փթածը հեռացներ, ծուռտիկ-մուռտիկները խաշեր ու յերեխաներին տար, մեզ ել կարդին անկեր, վլացից գլորան գլորեր, ծլելուց հետո յերկու անդամ փոցխեր, բողազները կարդին 2—3 անգամ լցներ, իսկի տեղ կունենա՞ր մեզ պահելու: Հիմի ել բերել, լցըել ա ես փոսում և վրայից հողով ծածկել, մի ծալ, մի խողովակ չի թողել, վոր մենք ել շունչ քաշենք ու եստեղ հիվանդությունից չխեղպ-վենք, — քչփշալով արտնջում ելին կարտոֆիլները հողի տակից: Գալոն և կինը զարմացած լսողություն ելին կարել ու շվարած մնացել:

— Ի՞նչ լավ կլիներ, — գնչացին կովերը. Եղպես վոր լիներ, ոռ մեզ ել բաժին կհասներ: Ա՛յ

Մարալ ջան, գիտես ինչ լավ ու համեղ ա խաշած
ու մի քիչ ել աղ ցանած կարտոֆիլը։ Մի անգամ
փոքրիկ Մուկուչը մի խաշած կարտոֆիլ դրավ
բերանս, մինչև հիմա յել համը բերնից չի անցել։

— ԶԵՐԱՆ ջան, դու բազուկ (տակ) կամ
դգում իսկի կերած կամ: Այ լազաթին կեր, այ
անուշ ու քաղցր բան: Այ ետենց կեր թող տան
ու տեսնեն կաթի լազաթը: Յես մի անգամ մտա
Ավագենց բոստանը, յերբ վոր բազուկը հանել,
բայց դեռ տուն չելին տարել: Մի քանիսի համը
վոր չտեսա, ախորժակս բացվեց, բերանս քաղ-
ցրացավ, վոր թողնելին բոլորը կուտելի: Համա
վրա հասավ Ավագի կինը, մի յերկու ճիպոտ
ել հասցրեց ու դուրս արավ, բայց յես ել
բերանս բաց արի, ճամբի դգումներից մեկը
հափոեցի: Եղ որը կովկիթի կեսը կաթով լեցվեց:
Ապրես, Մարալ ջան,—ասավ Գալոյի կնիկ Մա-
րին, —այ եղպես շնորհքով յեղիր: Բայց Մարին
չգիտեր, վոր գողունի կերածս բազուկից եր
լցվել կուրծս: Այս, մի, թեպետ ճիպոտ կերա,
բայց երնեկ են որին:

— Իբրև թե մԵՐ հալը շատ լավ ա, — լսվեց
թառերից. ես ինչ որ ա: Սադ որը կիսաքաղց,
աղբակուլտերի մեջ ընկած ենք ամուսին բերան-
ներս բան չի ընկառու: Վայ կանոնավոր կակտ տվող
կա, վո՞չ ըջուջ անկեղու ափազ, զի՞չ մի ըիշ կիր,
վո՞չ ել ջուր:

— «Ես անտերները մինչև հիմա ձու չեն ած-նում», — դժգոհում են Գալոն ու իրեն կինը և ըս-պանում են գլուխներս թռցնել։ Ախր ձուն վորտեղից պիտի գոյանա, յերբ վոր փորներս սաղ որը վեց-վեց անում։ Մեջներս ել բերել, քոսոտ ու անշնորհք աքլոր են զցել, վոր իսկի չենք ու-զում վրան նայել և գեռ հալա ուզում են, վոր ձու ածենք։ Սրանք կարծում են, վոր մենք ճաշակ չունենք և ամեն մի քոսոտի կնդունենք։ Ներեցեք. ահագին ընտանիքով մի աքլոր ունենանք ու են ել քոսոտ, — դանդատվեցին հավերը։

Լսվում ելին շատ ուրիշ տրտունջներ ել, բայց այդ բոլորն այնքան հեռու յեր, վոր Գալոն ու կինը չեյին կարողանում լսել ու հասկանալ։ Լսեցին խոզերի տրտունջը, վոր նրանց չեն պահում ու շատացնում։ Լսեցին ճագարների թույլ ճայնը՝ իիստ արագ բազմանալու, ընտիր միս և մորթի տալու մասին, բայց մանրամասնությունները լավ չհասկացան։

— Մարե, ա կնիկ, ես ի՞նչ զիշեր եր, ես ի՞նչ զարմանալի խոսակցություն եր, ես ի՞նչքան բան լսեցինք ու սովորեցինք. ծուռն ա յեղել մեր ճամբեն, սխալ ա յեղել մեր աշխատանքը, պետք ե ստածել և փոխել մեր աշխատանքի կերպը։

— Յես ել եմ եղանակ կարծում, Գալո ջան։ Մենք մինչև հիմա չենք հասկացել մեր մսաւն ու ոգուտը։

— Գիտես, ինչ եմ մտածում, Մարե, — հարցը Գալոն կնոջը։

— Ի՞նչ։

— Նախ են եմ մտածում, վոր եգուց պիտի վեր կենամ ու լավ լազաթին կտրեմ մեր ուռենիների գլխները, բոլոր ճյուղերը՝ հենց տակից։ Լավլազաթին կտրեմ ու դարսեմ, վոր չորանափայտ դառնա ու վառենք։ Հետո պետք ե մի առանձին տեղ շինեմ, տավարի աղբը հավաքեմ ու կիտեմ ենտեղ, վոր յեղանակը փոքր ինչ տաքացավ թե չե, իսկույն տանեմ ու արտս փեյինեմ։ Ունեցած ցանս սաղ տարին բավական ա։ Հետո յել արտս գութանով հերկեմ, տափնեմ ու մի լավ ցանեմ շարբացան և եքենայով, — նրանով, վոր գյուղատնտեսը բերել եր ու փորձ եր անում Կակոյենց հողումը։

— Յես ել հենց եգուցվանից սկսելու յեմ սերմը ձեռքով ջոկել՝ բրնձի նման։ Մնացածն ել դու կտանես քաղաք ու մաշինով մաքրել կտաս, վոր ջոկած ու մաքուր սերմ ցանենք։

— Ազրոնոմն ինքը բերելու յե եղ սաշինը մեր գյուղը, են ժամանակ ինչ սերմ ունենք, նրանով կմաքրենք, ել ինչի յեմ դնում քաղաք։

— Արտը վոր գուրս գա, յես ել յերեխաներին կհավաքեմ ու արտի մեջ մի հատ ժանգիւալ խոտ չեմ թողնի, վոր բումնի։ Հետո յել, յերբ արտը կթփակալի, յեզները կլծեմ ու ամբողջ

արտը կփոցիւեմ, վոր արտս ծարավ չմնա, լավ
աճի ու լավ բերք տա: Իմացա՞ր:

— Ախր Մարե ջան, գլորանը մոռացա: Յա-
նելուց հետո մի լավ գլորան կգլորեմ ու կփոց-
իւեմ:

— Ի հարկե, գլորանը պետք ա, վոր թուփ
թուփ արտ բանի, — եղածս եյին ասում:

— ՀԵ! գիտի Մարալ ջան, Զեյրան ջան ու
Սոնիկ ջան, ել ձեր խեղճությունը պրծավ: Մի
վեց չվան ենենց կորնգան կամ յոնջա ցանեմ,
վոր ուտելուց չկշամանաք: Բա բազուկը, դգումը՝
կարտոֆիլը: Զե, ձեզ եսենց պահելը խայտառա-
կություն ա: Մարե, հենց եգուց փայտե սանրովդ
կովերին մի լավ կսանրես, վոտների թրիքները
տաք ջրով կլվանաս, Սոնիկին լավ մոխրաջրով
կլողացնես ու կցամաքեցնես, վոր չմրսի: Հենց
վոր քաղաք գնացի, կերթամ ափթեք ու մոխրա-
գուն մազ կրերեմ վոջիլի դեմ:

— Գալո, յես ուզում եմ յերեկոյան ջուր
բերեմ, լցնեմ մեր ես կարասի մեջ և առավոտ-
յան ես ջուրը տամ խեղճերին, վոր առավոտյան
են ցրտին դուրս չանենք ու չմրսացնենք: Տակն
ել շուտ շուտ կմաքրենք, փեյին ու դարման կլց-
նենք, վոր մաքուր նստեն ու վեր կենան:

Մսուրն ել կցածրացնեմ, յերդիկներն ել
շուշա կըցեմ: Կտորներ կառնեմ, վոր դվաթս
հաղթի:

— Գալո, բա կարտոլի փոսը... մեկ բաց,
տեսնենք, թե մեր կարտոֆիլն ի՞նչ որումն ա:
Փտածները ջոկենք, դեն ածենք, շատ ճաքճքած-
ներն ու ծուռտիկ-մուռտիկները հանենք, բանեց-
նենք: Սերմացուն ել առանձին ջոկենք ու պա-
հենք, վոր ժամանակին լավ սերմ ցանենք: Իսկ
քաղիանը, բողազ տալը դու ինձանից պահանջիր,
յերեք անգամ բողազ կտամ:

— Յես ել յերկու անգամ կփոցիւեմ ու քաղ-
իան կանեմ: Ենենց կարտոլ տուն բերեմ, վոր
սաղ գեղը զարմանա:

— Հավերի մասին ել պետք ե մտածել: Մի
քիչ կուտ պետք ե ավելացնել, բակում ավազ ու
մի քիչ կիր լցնել, մի հատ ել աքլոր ճարել, վոր
հավերը չգժգոհեն ու գանգատ չանեն: Մեր աք-
լորն ինչացու ա, իսկապես անշնորհք ու քոսոտ ա:

Գալոն կամաց-կամաց վերկացավ, հագնվեց
ու դուրս յեկավ: Նա գնաց յուր դրացի Վաղոյից
սղոց ուզելու և զարմացած տեսավ, վոր նա ծա-
ռերից խնամքով հավաքում եր հին ու չոր տե-
րերն ու բոժոժները, կտրտում չոր ճյուղերը
և լցում կրակի մեջ:

— Բարի լույս, խնամի Վաղոյ: Խեր ըլի, եղ
ի՞նչ բանի յես, եղ ի՞նչ ես անում:

— Այ աստծու բարին, խնամի Գալո: Տես-
նում ես ելի, ինչ եմ անում: Ես գիշեր մի զար-
մանալի գիշեր եր: Պտղատու ծառերս գանգատ-

վում եյին իրար և ինձ մեղադրում վոր իրենց չեմ խնամում: Յես ուշադրությամբ լսեցի, նրանց բոլոր ցանկությունները և ահա հենց ես որվանից սկսել եմ աշխատել, վոր մաքրեմ չոր ճյուղերը, միջատների և թրթուրների ձվանները, չոր տերենները և ճաքճքած կեզեր: Թե վոր ուրիշ բանի ել կարիք յեղավ, պիտի գնամ ու գյուղատնտեսից հարցնեմ, վոր ծառերս պտուղ տան: Ուզում եմ՝ հենց գյուղատնտեսից խնդրեմ, վոր ինձ պատվաստել սովորեցնի, վոր յես ել ծառերից ոգուտ ստանամ, նրանց պտուղի համն առնեմ: Պարտեզի շուրջն ուզում եմ բարդի շարեմ, վոր համ քամուց պաշտպանեմ, համ ել շինության փայտ կունենամ:

— Իմ գլխովս ել ամի զարմանալի բան անցկացել գիշերս. տավար, կարտոֆիլ, վարելահող ել ով ասես՝ լեզու չեր առել ու չեր գանգատվում: Թունդ խրատվեցի ու վճռեցի հենց ես որվանից փոխել իմ աշխատանքի կերպը: Յս ել եմ ծառերից սկսում: — Քո մեծ ողոցդ տալ չես կարող խնամի Վաղո: Ուզում եմ յեքա ուռիներս ճղների հենց տակից խուզեմ, վոր ջահելանան: Հաստ ճղները գոմի համար գործ կածեմ, մանրները կվառեմ, իսկ թրիքը չեմ վառի և գործ կածեմ հողերի համար:

— Ես սհաթին, խնամի Գալո, իսկուն կըերեմ: Բայց եղինչ լավ ես մտածել: Ամոթ ա Գա-

լո ջան, ամոթ: Եսքան ել թամբալություն: Աշխարհը խելքի ա յեկել, իսկ մենք քնած ենք: Արի՝ սկսենք, աշքներս չորս բանանք, աշխատենք ու փորձենք, փորձը, գործ սկսելը հաջողության կեսն ա: Դեհ յերթաս բարով՝ ժամանակ չկորցնենք:

Դրացիներն իրարից հեռացան և գործի կըպան: Ինչ վոր լսել եյին, սովորել ու մտադրվել, սկսեցին իրագործել: Նրանց անտեսությունն ըսկսեց արագ փոխվել: Աշնան սկզբին նրանց բակերում կանգնած եյին կորնգանի դեղեր, վաղոյի ծառերը լի եյին պտուղներով, հորերը լցվել եյին կարմրահատ ցորենով ու գարով: Աշնան վերջը դրանց ավելացավ բազուկն ու կարտոֆիլը, դդումն ու բանջարեղենը: Կճուճները լի եյին յուղ ու պանրով, հավերը ձագ եյին հանել: Նոր, լախաթիկունք աքլորը հապարտ-հպարտ զրոսնում եր բակում իր գուշնզգույն տիկինների հետ: Գալոն մեծացրել եր գոմի լուսամուտները, կտորկատը շուշաներ բցել, ներսը ջրհոր փորել, պատերն սպիտակացրել, սալերը դգել, մսուրները ցածրացրել և ողանցքներ շինել: Սոնիկը յեքա յերինջ եր գարձել: Մարալի ու Զեյրանի քեֆին քեֆ չեր հասնիլ: Հանդից գալիս երին թե չե, իսկույն յեղալի յոնջայից ընթրիք եյին ստանում և բժժալով լցնում եյին կաթի վեղրոն հունիս

ամսվա նման, կուշտ կերակրելով իրենց փոքրիկ
հորթուկներին:

Ահա այս ձեռվ արագությամբ փոխվեց Գա-
լոյի և Վաղոյի տնտեսությունը:



15. «Յերևանի գետի զուտդ».— Անդրկովկաս-
տան Ցերկրային կոմիտեի բանաձեռ գյու-
ղացիական հարցի մասին, [REDACTED] 14 »
16. Հայաստանի Կոմմոնիքատական կուսակցու-
թան Անեսոնական Կոմիտեի Շուրուդ
Պետութիւնական հանձնեցիք (ապաված) 15 »
17. Ա. Ռամինան.— Խաչոր յեղջաւրավոր անու-
սունսերի ժանուարին 15 »
18. Հ. Սպահան.— Գյուղատնտեսական բանվո-
րությունը և միջազգային կոմմոնիքատական
շարժումը 40 »
19. Կ. Խան-Սպահան.— Աւղացուց արդյունավետ
խոզարուծության 15 »
20. Ֆեղինանդով.— Հավարուծ, և նրա ոգուան, 20 »
21. Ա. Գանելիք.— Լալ և ուշ, քան յերբեք
(ազբու-պիտի)
22. Ա. Ա. Մելիք-Շահնազարյան.— Կոտավարը և
կանեփը 20 »
23. [REDACTED].— Անդրկովկասի տնտեսական
գրությունը 15 »
24. Հահանգ Հայաստանի Խ. Ս. Հանրապետու-
թան անտառներից փայտեղեն բաց բող-
ելու համար (պաշտոնական)
25. Պոնք. Ավ. Քալանքար.— Կոմիտառու կողի
կերպարումը 30 »
26. Ա. Ա. Տրիքոնդով.— Խոչու պետք և ցելը
շուտ անհի 15 »
27. [REDACTED].— Գալուստի վիկը (ազբու-պատ-
մվածք) 15 »
28. [REDACTED].— Կորտովիլի մշակությունը 20 »
29. Ա. Սուբբոսին.— Կոմիտառու (ազբու-պիտի)
30. Ա. Ա. Մելիք-Շահնազարյան.— Տիզկան



NL0347409



45336

31. Խո. Տեր-Եւեսիսյան.—Պաղասու ծառերի
մլասատուներն ու հիվանդությունները 25 »
32. Խո. Ավգալքեզյան.—Գյուղի հողաշինաբարպու-
թյունը 20 »
33. Արագի-Տրակոսորը (ազբու, պատմվածք) 15 »
34. Յալեացի-Խորհրդավոր տրատունչներ (ազ-
բուզբուլց) 15 »

ՏՊԱԳՐՎՈՒՄ-ԵՆ ՑԵՎ ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

1. [REDACTED] . . . Գոմազրի նշանակությունը
ողաբարտացման գործուժ:
2. Մ. Խանզադյան.—Մեղվարուծության ձեռնարկ
3. Խենկո-Ապեր.—Գյուղատնահանասնաբուժն ու իր
ազբուզբուլցը (ազբու-պոյշիմ):
4. Վ. Միքայելյան.—Սոնա կովի մրցանակը (ազբու-
պատմ.):
5. Միքաս.—Մաղոյի պատմը (ազբուպատմ.):
6. Վ. Շոյկով.—Այծն աղքատի կովն եւ

ԴԻՄԵԼ՝ ՇԵՐԵՎԱՅ, ՀՈՂԺՈՂԿՈՄԱՄ՝ ՀՐԱՄԱԲԱԿԾՈՒԹՅԱՆ:
Պետքատի կենարոննական յևլ
գավլառական զբախանություններին,
Գավճողբաժիններին: